

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ  
ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ

YEREVAN STATE UNIVERSITY  
FACULTY OF HISTORY

**ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ**  
**ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ**

**ИСТОРИЯ И КУЛЬТУРА**  
**АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ**

**HISTORY AND CULTURE**  
**JOURNAL OF ARMENIAN STUDIES**

**№ 1**

**ԵՐԵՎԱՆ - ԵՐԵՎԱՆ - YEREVAN**  
**ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ, YSU PRESS**  
**2020**

**Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի  
Պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ**

Գլխավոր խմբագիր՝ պ.գ.դ., պրոֆ. **Էդիկ Մինասյան**  
*խմբագրական խորհուրդ՝*

**Արման Եղիազարյան** (խմբագիր, պ.գ.դ., դոց.), **Արամ Սիմոնյան** (ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Մելքոնյան** (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պ.գ.դ., պրոֆ.), **Արտակ Մովսիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Ալբերտ Ստեփանյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկ Ավետիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայրապետ Մարգարյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Լևոն Չուգասզյան** (արվեստագիտ. դոկտ., պրոֆ.), **Համլետ Պետրոսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Իգիթ Ղարիբյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Ջենրիկ Աբրահամյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկազ Հովհաննիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Ներսիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Հայրունի** (պ.գ.դ., պրոֆ.), **Վալերի Թունյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Վանիկ Վիրաբյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Ռաֆիկ Նահապետյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հակոբ Հարությունյան** (պ.գ.դ., դոց.), **Հովիկ Գրիգորյան** (պ.գ.թ., դոց.), **Մխիթար Գաբրիելյան** (պ.գ.թ., դոց.), **Էդգար Հովհաննիսյան** (պ.գ.թ., դոց.):

Главный редактор - докт. ист. наук, проф. **Эдик Минасян**  
*Редакционная коллегия:*

**Арман Егиазарян** (редактор, д.и.н., доц.), **Арам Симонян** (директор Института Арменоведческих исследований ЕГУ, членкор. АН РА, д.и.н., проф.), **Ашот Мелконян** (академик АН РА, д.и.н., проф.), **Артак Мовсисян** (д.и.н., проф.), **Альберт Степанян** (д.и.н., проф.), **Айк Аветисян** (д.и.н., проф.), **Айрапет Маргарян** (д.и.н., проф.), **Левон Чугасзян** (докт. искусствовед. наук, проф.), **Гамлет Петросян** (д.и.н., проф.), **Игит Гарибян** (д.и.н., проф.), **Генрих Абраамян** (д.и.н., проф.), **Айказ Оганесян** (д.и.н., проф.), **Ашот Нерсесян** (д.и.н., проф.), **Ашот Айруни** (д.и.н., проф.), **Валерий Тунян** (д.и.н., проф.), **Ваник Вирабян** (д.и.н., проф.), **Рафик Наапетян** (д.и.н., проф.), **Акоб Арутюнян** (д.и.н., доц.), **Овик Григорян** (к.и.н., доц.), **Мхитар Габриелян** (к.и.н., доц.), **Эдгар Оганнисян** (к.и.н., доц.).

Editor-in-Chief - Doctor of Sciences, prof. **Edik Minasyan**  
*Editorial Board:*

**Arman Yeghiazaryan** (editor, Doctor of Sciences, associate prof.), **Aram Simonyan** (Director of YSU Institute for Armenian Studies, Corresp. member of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Ashot Melkonyan** (Academician of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Artak Movsisyan** (Doctor of Sciences, prof.), **Albert Stepanyan** (Doctor of Sciences, prof.), **Hayk Avetisyan** (Doctor of Sciences, prof.), **Hairapet Margaryan** (Doctor of Sciences, prof.), **Levon Chugaszyan** (Doctor of Arts, prof.), **Hamlet Petrosyan** (Doctor of Sciences, prof.), **Igit Gharibyan** (Doctor of Sciences, prof.), **Henrik Abrahamyan** (Doctor of Sciences, prof.), **Haikaz Hovhannisyan** (Doctor of Sciences, prof.), **Ashot Nersisyan** (Doctor of Sciences, prof.), **Asot Hayruni** (Doctor of Sciences, prof.), **Valeri Tunyan** (Doctor of Sciences, prof.), **Vanik Virabyan** (Doctor of Sciences, prof.), **Rafik Nahapetyan** (Doctor of Sciences, prof.), **Hakob Harutunyan** (Doctor of Sciences), **Hovik Grigoryan** (PhD of History, associate prof.), **Mkhitar Gabrielyan** (PhD of History, associate prof.), **Edgar Hovhannisyan** (PhD of History, associate prof.).

**ISSN 1829-2771**

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ  
СОДЕРЖАНИЕ / CONTENT**

**ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ / ИСТОРИЯ / HISTORY**

|  |    |
|--|----|
| <b>Էդիկ Մինասյան</b> – ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՂԹԱՆԱԿԻ ԳՈՐԾՈՒՄ (1941-1945 ԹԹ.).....                | 8  |
| <b>Эдик Минасян</b> – ВКЛАД АРМЯНСКОГО НАРОДА В ПОБЕДУ В ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЕ (1941-1945 ГГ.).....                    | 32 |
| <b>Edik Minasyan</b> – THE CONTRIBUTION OF THE ARMENIAN PEOPLE TO THE VICTORY IN THE WORLD WAR II (1941-1945). .....         | 33 |
| <b>Արտակ Մովսիսյան</b> – ՀԱՅ ԷԹՆՈՍԻ ՏԱՐԱԾՄԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ԹՎԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԻՆ (ԸՍՏ ՍՏՐԱԲՈՆԻ ԿԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ).....    | 34 |
| <b>Артак Мовсисян</b> – ГЕОГРАФИЯ РАСПРОСТРАНЕНИЯ АРМЯНСКОГО ЭТНОСА НАКАНУНЕ НАШЕЙ ЭРЫ (ПО СВЕДЕНИЯМ СТРАБОНА).....          | 40 |
| <b>Artak Movsisyan</b> – THE GEOGRAPHY OF THE SPREAD OF THE ARMENIAN ETHNOS ON THE EVE OF OUR ERA (ACCORDING TO STRABO)..... | 40 |
| <b>Միքայել Մալխասյան</b> – ՄԵԾ ՀԱՅԹԻ ԱՐԵՎՍՏՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ԸՍՏ ԿԼԱՎԴԻՈՍ ՊՏՐՈՍԵՆՈՍԻ «ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ».....                     | 41 |
| <b>Микаэл Малхасян</b> – ЗАПАДНЫЕ ГРАНИЦЫ ВЕЛИКОЙ АРМЕНИИ ПО “ГЕОГРАФИИ” КЛАВДИЯ ПТОЛЕМЕЯ. ....                              | 47 |
| <b>Mikayel Malkhasyan</b> – THE WESTERN BORDERS OF GREATER ARMENIA IN CLAUDIUS PTOLEMY’S “GEOGRAPHY”. .....                  | 47 |
| <b>Էդգար Վարշամյան</b> – ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀՈՒՍԵԱ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՀԱՎԱՍԱՐՏՈՒԹՅԱՆ ԾԻՐՈՒՄ. ԱՐՇԱԿ Բ-Ի ԱՐՏԱԹԻՆ ԶԱՐԱԶԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ .....         | 49 |
| <b>Эдгар Варшамян</b> – АРМЕНИЯ В РАЗГАР РИМСКО-ПЕРСИДСКОГО КОНФЛИКТА: ВНЕШНЯЯ ПОЛИТИКА АРШАКА II. ....                      | 60 |
| <b>Edgar Varshamyan</b> – ARMENIA IN THE MIDST OF THE ROMAN-PERSIAN CONFLICT: THE FOREIGN POLICY OF ARSHAK II. ....          | 61 |
| <b>Արգիշտի Վարդանյան</b> – ՄԱՆՎԵԼ ՄԱՄԻԿՈՆՅԱՆԸ ՄԵԾ ՀԱՅԹԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԽՆԱՄԱԿԱԼ ԵՎ ԿԱՌԱՎԱՐԻՉ .....                            | 62 |
| <b>Аргисhti Варданян</b> – МАНВЕЛ МАМИКОНЯН – РЕГЕНТ И УПРАВЛЯЮЩИЙ ЦАРСТВОМ ВЕЛИКОЙ АРМЕНИИ. ....                            | 68 |
| <b>Argishti Vardanyan</b> – MANVEL MAMIKONYAN – REGENT AND RULER OF THE KINGDOM OF GREATER ARMENIA. ....                     | 68 |
| <b>Արման Եղիազարյան</b> – ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԱՌԱՎՍՄԱՆ ՊԱՏՃԱՌ ԴԱՐՁԱԾ ՄԻ ԴԱՎԱԴՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ.....                    | 70 |
| <b>Арман Егиазарян</b> – О ЗАГОВОРЕ, ПРИВЕДШЕМ К РАСКОЛУ БАГРАТИДСКОГО ЦАРСТВА. ....   | 79 |
| <b>Arman Yeghiazaryan</b> – ON A CONSPIRACY THAT CAUSED THE SPLIT OF THE BAGRATUNIES KINGDOM. ....                           | 79 |
| <b>Արարատ Ստեփանյան</b> – ՓԻԼԱՐՏՈՍ ԿԱՐԱԺՆՈՒՆՈՒ ՊԱՏԿԱՏԻՏՐՈՍՆԵՐԸ .....   | 81 |
| <b>Арарат Степанян</b> – ПОЧЕТНЫЕ ТИТУЛЫ ФИЛАРЕТА ВАРАЖНУНИ.....   | 86 |
| <b>Ararat Stepanyan</b> – THE HONORARY TITLES OF PHILARETOS BRACHAMIOS.....  | 86 |

|   |     |
|---|-----|
| <b>Սեյրան Չաքարյան</b> – ԱՉԳԻ ԲՆՈՒԹԱԳՐՄԱՆ ՀԱՐՑԸ ՀԱՅՈՑ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԵՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀԱՐԱՑՈՒՅՑՈՒՄ (ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՅԻ ԵՎ ՂԱԶԱՐ ԶԱՀԿԵՑԻ).....                                    | 88  |
| <b>Сейран Закарян</b> – ПРОБЛЕМА ХАРАКТЕРИСТИКИ НАЦИИ В ХРИСТИАНСКОЙ ПАРАДИГМЕ АРМЯНСКОЙ ИДЕНТИЧНОСТИ (ГРИГОР ТАТЕВАЦИ И ГАЗАР ДЖАХКЕЦИ).....                         | 97  |
| <b>Seyran Zakaryan</b> – THE PROBLEM OF CHARACTERIZATION NATION IN THE CHRISTIAN PARADIGM OF ARMENIAN IDENTITY (GRIGOR TATEVATSI AND GHAZAR JAHKETSİ).....            | 98  |
| <b>Սարգիս Բալդարյան</b> – ԿՈՍՏԱՆԴ ՋՈՒՂԱՅԵՑՈՒ ԿԱՃԱՌԱԿԱՆԱԿԱՆ ՁԵՆՆԱՐԿՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ՑԱՆՑՈՒՄ.....  | 99  |
| <b>Саркис Балдарян</b> – ЦИРКУЛЯЦИЯ КОММЕРЧЕСКИХ УЧЕБНИКОВ КОНСТАНТА ДЖУГАЕЦИ В ТОРГОВОЙ СЕТИ НОВОЙ ДЖУЛЬФЫ.....  | 106 |
| <b>Sargis Baldaryan</b> – THE CIRCULATION OF COMMERCIAL HANDBOOKS OF CONSTANT OF JULFA IN THE TRADE NETWORK OF NEW JULFA.....   | 106 |
| <b>Արարատ Հակոբյան</b> – 1920 Թ. ԹՈՒՐԵ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍԿՍՄԱՆ ՕՐԿԱ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ (ՊԱՏԵՐԱԶՄԻ 100-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ).....  | 108 |
| <b>Арарат Акопян</b> – К ВОПРОСУ О ДАТЕ НАЧАЛА ТУРЕЦКО-АРМЯНСКОЙ ВОЙНЫ 1920 Г. (К 100-ЛЕТИЮ ВОЙНЫ).....   | 117 |
| <b>Ararat Hakobyan</b> – ABOUT THE DATE OF THE BEGINNING OF THE TURKISH-ARMENIAN WAR IN 1920 (TO THE 100TH ANNIVERSARY OF THE WAR).....                               | 117 |
| <b>Նելլի Մինասյան</b> – 1920 ԹՎԱԿԱՆԻ ԹՈՒՐԵ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՀԱՍԱԹՅՈՒՐԵԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ.....   | 118 |
| <b>Нелли Минасян</b> – ТУРЕЦКО-АРМЯНСКАЯ ВОЙНА 1920 ГОДА И ПЛАНЫ ПАН-ТЮРКИЗМА.....  | 123 |
| <b>Nelli Minasyan</b> – THE TURKISH-ARMENIAN WAR OF 1920 AND THE PROGRAMS OF PAN-TURKİSM.....   | 123 |
| <b>Սուրեն Ավետիսյան</b> – ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՐՄԻՐ ԽԱԶԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵՇ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ.....  | 124 |
| <b>Сурен Аветисян</b> – ДЕЯТЕЛЬНОСТЬ ОБЩЕСТВА КРАСНОГО КРЕСТА АРМЕНИИ В ГОДЫ ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ.....   | 131 |
| <b>Suren Avetisyan</b> – THE ACTIVITY OF RED CROSS SOCIETY OF ARMENIA IN THE YEARS OF THE GREAT PATRIOTIC WAR.....  | 131 |
| <b>Առնակ Սարգսյան</b> – ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԺՈՂՈՎԱԿԱՐԱՑՄԱՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (ՀՀ 2018 Թ. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ).....                              | 132 |
| <b>Арнак Саргсян</b> – УЧАСТИЕ В ИЗБИРАТЕЛЬНОМ ПРОЦЕССЕ В РЕАЛИЯХ ДЕМОКРАТИЗАЦИИ (НА ПРИМЕРЕ ВЫБОРОВ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИИ В 2018 Г.).....                             | 139 |
| <b>Arnak Sargsyan</b> – PARTICIPATION IN THE ELECTORAL PROCESS IN THE REALITIES OF DEMOCRATIZATION (ON THE EXAMPLE OF THE REPUBLIC OF ARMENIA IN 2018 ELECTIONS)..... | 139 |
| <b>Գայանե Թովմասյան, Ռուբիկ Թովմասյան</b> – ՉՐՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՅՈՒՐԸՆԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԱՊԱԳԱՅԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ (ԱՇԽԱՐՀ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆ).....                | 140 |
| <b>Гаяне Товмасян, Рубик Товмасян</b> – БУДУЩИЕ ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ ТУРИЗМА И ИНДУСТРИИ ГОСТЕПРИИМСТВА В МИРЕ И В АРМЕНИИ.....   | 149 |

**Gayane Tovmasyan, Rubik Tovmasyan – FUTURE TRENDS OF TOURISM AND HOSPITALITY INDUSTRY DEVELOPMENT IN THE WORLD AND IN ARMENIA.** ..... 149

**Արշալույս Տետեյան – ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԼԵՆՆԱ-ՑԻՆ ԴԱՐԱԲԱՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԲԱՆԱԶԵՎԵՐՈՒՄ** ..... 150

**Аршалуys Teteyan – ВОПРОС ПРИЗНАНИЯ ГЕНОЦИДА АРМЯН И ПРОБЛЕМА НАГОРНОГО КАРАБАХА В РЕЗОЛЮЦИЯХ ЕВРОПЕЙСКОГО ПАРЛАМЕНТА.** ..... 156

**Arshaluys Teteyan – RECOGNITION OF ARMENIAN GENOCIDE AND NAGORNO-KARABAKH PROBLEM IN THE RESOLUTIONS OF EUROPEAN PARLIAMENT.** ..... 156

**ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ / АРХЕОЛОГИЯ И ЭТНОГРАФИЯ / ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY**

**Ռաֆիկ Նահապետյան – ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՆՆԱՇԽԱՐՀԸ՝ ԱՆԱՍՆԱՊԱՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀՆԱԳՈՒՅՆ ԿԵՆՏՐՈՆ (ԸՍՏ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ԱՆՏԻԿ ԳՐԱԿՈՐ ԱՐՔԵՈՒՐՆԵՐԻ)** ..... 157

**Рафик Наапетян – АРМЯНСКОЕ НАГОРЬЕ - ДРЕВНЕЙШИЙ ЦЕНТР СКОТОВОДЧЕСКОЙ КУЛЬТУРЫ (ПО АРХЕОЛОГИЧЕСКИМ МАТЕРИАЛАМ И АНТИЧНЫМ ПИСЬМЕННЫМ ИСТОЧНИКАМ).** ..... 162

**Rafik Nahapetyan – ARMENIAN HIGHLAND - THE MOST ANCIENT CENTRE OF CATTLE BREEDING CULTURE (ACCORDING TO ARCHAEOLOGICAL MATERIALS AND ANCIENT WRITTEN SOURCES).** ..... 162

**Քրիստինա Այվազյան – ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ** ..... 163

**Кристина Айвазян – БЛАГОТВОРИТЕЛЬНОСТЬ В АРМЯНСКИХ НАРОДНЫХ СКАЗКАХ.** ..... 174

**Christina Ayvazyan – CHARITY IN THE ARMENIAN FAIRY TALES.** ..... 175

**ԱՐԿԵՍ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ / ИСКУССТВО И КУЛЬТУРА / ART AND CULTURE**

**Գեղամ Ասատրյան, Ավետիս Գրիգորյան – ՄԱՔՐԱՎԱՆԻ ԽԱՉՔԱՐԵՐԸ (XII-XIV ԴԴ.)** ..... 176

**Гегам Асатрян, Аветис Григорян – ХАЧКАРЫ МАКРАВАНКА (XII-XIV ВВ.)** ..... 181

**Gegham Asatryan, Avetis Grigoryan – THE CROSSLINES OF MAKRAVANK (XII-XIV CENTURIES).** ..... 181

**Մոնթե Մաթևոսյան – ՋՐԱՌԱՏԻ Ս. ԿԱՐԱՊԵՏ ԵՎԵՂԵՑՈՒ ԽԱՉՔԱՐԵՐԸ** ..... 185

**Монте Матевосян – ХАЧКАРЫ ЦЕРКВИ СВЯТОГО КАРАПЕТА В ДЖРАРАТЕ.** ..... 188

**Monte Matevosyan – THE KHACHKARS OF JRARAT ST. KARAPET CHURCH.** ..... 188

**Շուշանիկ Համբարյան – ԵՐՈՒՍԱՂԵՄԻ Հ<sup>մ</sup> 1970 ԱՎԵՏԱՐԱՆԸ ԵՎ ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐԻ ՈՒՇ ԾՐՋԱՆԻՆ ԲՆՈՐՈՇ ՊԱՏԿԵՐԱԳՐԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱԳԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ** ..... 191

**Шушаник Амбарян – РУКОПИСЬ № 1970 ЕВАНГЕЛИЯ ИЕРУСАЛИМА И ИКОНОГРАФИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ МИНИАТЮР, ХАРАКТЕРНЫЕ ДЛЯ ПОЗДНЕГО ПЕРИОДА.** ..... 199

**Shushanik Hambaryan – № 1970 GOSPEL OF JERUSALEM AND THE ICONOGRAPHIC FEATURES OF THE MINIATURES CHARACTERISTIC OF THE LATE-PERIOD.** ..... 199

**ՍՓՅՈՒՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ / ДИАСПОРАВЕДЕНИЕ / DIASPORA STUDIES**

|   |     |
|---|-----|
| <b>Հրածին Վարդանյան</b> – ՍՓՅՈՒՌԻ ՏԻՊՈԼՈԳԻԱԿԱՆ ԵՎ ՀԱՅ ՍՓՅՈՒՐԸ.....  | 202 |
| <i>Грацин Варданян – ТИПОЛОГИЯ ДИАСПОРЫ И АРМЯНСКАЯ ДИАСПОРА.....</i>   | 207 |
| <i>Hratsin Vardanyan – TYPOLOGY OF DIASPORAS AND THE ARMENIAN DIASPORA.....</i>   | 208 |
| <b>Ալիկ Ղարիբյան, Գայանե Գալստյան</b> – ՀՅԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՒԹՅԱՆ ՍԿԶԲԱԿՈՒՐՈՒՄԸ ԱՄՆ-ՈՒՄ.....   | 209 |
| <i>Алик Гарибян, Гаяне Галстян – НАЧАЛО ДЕЯТЕЛЬНОСТИ АРФ ДАШНАКЦУТИОН В США.....</i>  | 214 |
| <i>Alik Gharibyan, Gayane Galstyan – THE BEGINNING OF ARF DASHNAKTSUTYUN ACTIVITY IN THE USA.....</i>   | 215 |
| <b>Էդգար Հովհաննիսյան</b> – ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՒ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ԿԻՐԱԿՆՈՐՅԱԴՊՈՐՑՆԵՐԻ ՀԻՄՆՈՒՄԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԴԵՐԸ ՀԱՅԱՊԱՅՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ.....   | 216 |
| <i>Эдгар Ованесян – СОЗДАНИЕ ВОСКРЕСНЫХ ШКОЛ КИЛИКИЙСКОГО КАТОЛИКОСАТА И ИХ РОЛЬ В СОХРАНЕНИИ АРМЯНСКОЙ ИДЕНТИЧНОСТИ.....</i>   | 225 |
| <i>Edgar Hovhannisyán – THE FOUNDATION OF SUNDAY SCHOOLS OF THE CATHOLICOSATE OF THE GREAT HOUSE OF CILICIA AND THEIR ROLE IN PRESERVATION OF THE ARMENIAN IDENTITY.....</i>        | 225 |
| <b>Մարիամ Հակոբյան</b> – ՀԱՅԱՍՏԱՆՅԱՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵՎԵՂԵՑՈՒ ՀՈՒՆԱՀԱՅՈՑ ԹԵՄԵՐԻ ՁԵՎԱԿՈՐՈՒՄԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԿԱՐՉԱԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ 1920-1930-ԱՎԱՆ ԹԹ.....                                | 226 |
| <i>Мариам Акопян – ФОРМИРОВАНИЕ ЕПАРХИЙ АРМЯНСКОЙ АПОСТОЛЬСКОЙ ЦЕРКВИ В ГРЕЦИИ И ИХ АДМИНИСТРАТИВНО-ДЕМОГРАФИЧЕСКОЕ ОПИСАНИЕ В 1920-1930-Х ГГ.....</i>                              | 231 |
| <i>Mariam Hakobyan – THE FORMATION OF THE GREEK-ARMENIAN DIOCESES OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH AND THEIR ADMINISTRATIVE-DEMOGRAPHIC DESCRIPTION IN THE 1920s AND 1930s.....</i> | 231 |
| <b>Նարինե Նուշերվանյան</b> – «ՍՓՅՈՒՐԸ-ՀՅՈՒՐԸՆԿԱԼՈՂ ԵՐԿԻՐ-ՀԱՅՐԵՆԻՔ» ՓՈԽ-ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՌԱՆԿՅՈՒՄԱԶԵՎ ՍՈՂԵԼԸ.....   | 232 |
| <i>Нарине Нушерванян – ТРЕХСТОРОНЯЯ МОДЕЛЬ ВЗАИМООТНОШЕНИЙ “ДИАСПОРА-ПРИНИМАЮЩАЯ СТРАНА-РОДИНА”.....</i>  | 240 |
| <i>Narine Nushervanyan – "DIASPORA-HOST COUNTRY-HOMELAND" TRIANGULAR MODEL OF RELATIONS.....</i>  | 241 |
| <b>Գևորգ Ղուկասյան</b> – ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՅՎԱԿԱՆ ՍՓՅՈՒՐԻ ԼՈՐԲԻՍՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՒԹՅԱՆ ՇՈՒՐՉ.....   | 242 |
| <i>Геворг Гукасян – О ЛОББИСТСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ АРМЯНСКОЙ ДИАСПОРЫ В ЗАПАДНОЙ ЕВРОПЕ.....</i>  | 250 |
| <i>Gevorg Ghukasyan – ON THE LOBBYING ACTIVITIES OF THE ARMENIAN DIASPORA IN WESTERN EUROPE.....</i>  | 251 |

**ԱՐՔՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ / ИСТОЧНИКОВЕДЕНИЕ / SOURCE STUDIES**

|   |     |
|---|-----|
| <b>Հայկազ Հովհաննիսյան, Կարեն Բայրամյան</b> – ՆՈՐԱՀԱՅՑ ԿԱԿԵՐԱԳՐԵՐ ԼԱՁԱՐՅԱՆՆԵՐԻ ԱՐԽԻՎԻՑ..... | 252 |
|---|-----|

*Այկազ Օգանեսյան, Կարեն Բայրամյան – НОВОВЫЯВЛЕННЫЕ ДОКУМЕНТЫ ИЗ АРХИВА ЛАЗАРЕВЫХ.* ..... 261

*Haikaz Hovhannisyán, Karen Bayramyan – NEWLY REVEALED DOCUMENTS FROM THE LAZAREVS ARCHIVE.* ..... 261

**Հովիկ Գրիգորյան, Հայկ Մխոյան – ԴԱՎԻԹ ԱՆԱՆՈՒՆԻ ԵՎ ԼԵՈՅԻ ԼԱՍԱՎԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** ..... 262

*Օւիկ Գրիգորյան, Այկ Մխոյան – ИЗ ПЕРЕПИСКИ ДАВИТА АНАНУНА И ЛЕО.* ..... 273

*Hovik Grigoryan, Haik Mkhoyan – FROM THE LETTERS OF DAVID ANANUN AND LEO.* ..... 274

**ՈՒՍՈՒՄՆԱՍԵԹՈՂԱԿԱՆ / УЧЕБНО-МЕТОДИЧЕСКИЙ / EDUCATIONAL-METHODOLOGICAL**

**Արա Հովհաննիսյան – ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ (ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՍԵԹՈՂԱԿԱՆ ՈՐԵՆՆԻՇՆԵՐ)** ..... 275

*Արա Օգանեսյան – УЧЕБНО-МЕТОДИЧЕСКИЕ ПРИНЦИПЫ И ОСОБЕННОСТИ КУРСА “ИСТОРИЯ АРМЯНСКОЙ ДИАСПОРЫ”.* ..... 281

*Ara Hovhannisyán – EDUCATIONAL AND METHODOLOGICAL PRINCIPLES AND FEATURES OF THE COURSE “HISTORY OF ARMENIAN DIASPORA”.* ..... 282

**ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ / РЕЦЕНЗИЯ / REVIEW**

**Վարինե Եղիազարյան, Մերի Հովհաննիսյան. ЭДИК МИНАСЯН – ГЕРОИЧЕСКАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ АРМЯНОК В ГОДЫ ОСВОБОДИТЕЛЬНОГО ДВИЖЕНИЯ КОНЦА XIX-НАЧАЛА XX ВЕКА, МОСКВА, «ЭДИТУС», 2020, 252 С** ..... 283

**Էդիկ Մինասյան, Էդիկ Չոհրաբյան. ՀԵՆՐԻԿ ԱՐՐԱՀԱՄՅԱՆ – ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽԱՑՄԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ԵՎ ԿԱՅԱՑՄԱՆ ՍԿԻՉԲԸ (1956 Թ. ՓԵՏՐՎԱՐ – 1991 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐ), Ե., ԵՊՀ ՀՐԱՏ., 2019, 398 ԷԶ** ..... 286

**Վալերի Թունյան, Արա Հովհաննիսյան. «ԴՈՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆՈՒՄ. ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, ԻՆՍՏԻՏՈՒՄՆԵՐ, ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ», ԳԻՏԱԿԱՆ ՀՈՂԿԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ / ԿԱԶՄՈՂ Է. ՄԻՆԱՍՅԱՆ /, Ե., ԵՊՀ ՀՐԱՏ., 2020, 212 ԷԶ** ..... 288

**ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ** ..... 290

**INFORMATION ABOUT THE AUTHORS** ..... 292

**Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ** ..... 294

**NOTICE FOR THE AUTHORS** ..... 294

## ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Հայկազ Հովհաննիսյան  
Կարեն Բայրամյան

### ՆՈՐԱՀԱՅՏ ՎԱՎԵՐԱԳՐԵՐ ԼԱԶԱՐՅԱՆՆԵՐԻ ԱՐԽԻՎԻՑ

*Հիմնաբառեր. Մատենադարան, Լազարյանների արխիվ, վավերագրեր, ռուս-պարսկական պատերազմ, Արևելյան Հայաստան, ռուսական քաղաքականություն, նամակներ, վեկուլցագրեր:*

Հայտնի է, որ պատմագիտության զարգացումը հիմնված է արխիվային վավերագրերի քննախույզ հետազոտության վրա. տարեց-տարի ի հայտ են գալիս վավերագրեր ու փաստաթղթեր, որոնք նոր լույս են սփռում պատմագիտական այս կամ այն հիմնահարցի ուսումնասիրության վրա: Այդուհանդերձ, սխալված չենք լինի, եթե ասենք, որ նույնքան կարևոր պատմական սկզբնաղբյուրները, վավերագրերն ու նյութերն իրենց անաղարտ տեսքով հրատարակելու գործընթացը հապաղում է: Այդ տեսակետից, պատմագիտության մեջ տեղ գտած թերությունները հաղթահարելու արդարացի միտումը անհրաժեշտաբար պետք է տարածել նաև պատմական աղբյուրների գնահատման ու հրատարակման բնագավառի վրա: Ընդամիս, եթե ժամանակին դրանք հրատարակվում էին կրճատումներով կամ մարքսիստական տեսակետին անհարիր վավերագրերն ու փաստերը անտեսելով ու ժողովածուներից դուրս թողնելով, ապա ներկայումս նույն կերպ էլ փորձ չի կատարվում բաղդատման կամ լրացուցիչ տվյալների հիման վրա պարզել այս կամ այն աղբյուրի իրական արժեքն ու հավաստիությունը:

Ներկա հրապարակումը թելադրված է հենց այդ հանգամանքով. ներկայացնել Մատենադարանի Լազարյանների արխիվում պահպանվող վավերագրերը, որոնք ժամանակին ուշադրության չեն արժանացել, բայց նոր լույս են սփռում XIX դ. արշալույսին Հայաստանում կատարված շատ իրադարձությունների ուսումնասիրության վրա:

Մատենադարանի Լազարյանների արխիվում առաջին հերթին աչքի է զարնում նամակների առատությունը: Դրանց հեղինակները XIX դ. հայ հոգևոր և քաղաքական գործիչներն են, մարդիկ, որոնք մեծ ազդեցություն են ունեցել ծավալվող քաղաքական իրադարձությունների վրա, ունենալով հայենասիրական, մյուսները՝ շահադիական մղումներով: Այդուհանդերձ, այդ ամենը հայոց պատմության անբաժանելի մասն են կազմում, որից կարելի է որոշակի պատկերացում կազմել ժամանակի պատմական անցքերի և հայ հասարակական-քաղաքական կյանքի մասին:

XIX դ. երկրորդ քառորդին վերաբերող նամակների մեծ մասը բնականաբար վերաբերում են 1826-1828 թթ. ընթացող ռուս-պարսկական պատերազմին: Ներկա հրապարակման մեջ վավերագրերի նորությունն այն չէ, որ դրանք նկարագրում են այս կամ այն պատերազմական գործողությունը կամ ռազմաճակատում տիրող իրավիճակը, քանի որ այդ ամենի մասին կարելի է տեղեկություններ քաղել ժամանակի բազմաթիվ ռազմագիտական գրականությունից: Խնդիրն այն է, որ արխիվում պահպանված հայազգի գործիչների նամակների և ռազմագիտական գրականության աշխարհայացքային մեկնությունները տարբեր են. եթե ռուս պատմաբանների համար կարևորը Կովկասի նվաճման գործընթացի ներկայացումն էր, ապա հայ գործիչների համար սեփական հայրենիքի ազատագրումը՝ բառի իրական և լայն իմաստով: Եվ խնդիրն այն չէ, որ հայ հոգևոր և քաղաքական գործիչները պարսկական լծից ազատագրումը համարում էին ռուսական տիրակալի կողմից հայ ժողովրդի հանդեպ մեծահոգության դրսևորում, այլ որ իրենք հենց այդպես էլ մտածում էին և ընդունում էին՝ թերևս անհաղորդ ցարիզմի վարած գաղութային քաղաքականությանից: Խնդիրը նույնիսկ այն չէ, որ այդ գործիչները լռելյայն տարել են ցարական գեներալների ու կառավարիչների հայ ժողովրդի հանդեպ անարդարացի գործողությունները,

\* Հոդվածը ներկայացվել է 20.04.2020 թ., գրախոսվել՝ 05.05.2020 թ., ընդունվել տպագրության՝ 15.06.2020 թ.:



ընդհակառակը, շատ դեպքերում ընդվզել են, բողոքել են, ընդդիմացել են՝ մտքի ծայրով անգամ թույլ չտալով մեծահոգի և բարերար տիրակալի մասին որևէ բացասական արտահայտություն: Եվ այդուհանդերձ, նամակներում հաղորդվում են տեղեկություններ, որոնց չես հանդիպի ռուսական ռազմական տեղեկագրերում: Հայկական տեղեկատվությունն, անշուշտ, տարբերվում է ռուսական տեղեկատվության շեշտադրումներից, ավելին՝ նրանում նորությունն ակնհայտ է:

Ներկայացվող վավերագրում, օրինակ, որը գրվել է Ներսես արքեպիսկոպոսի կողմից և ուղղված է Խաչատուր Լազարյանին, հայտնվում է 1827 թ. ապրիլի 25-30-ը Թիֆլիսից, Էջմիածնից և Երևանի բերդից հաղորդած լուրերի մասին. շտաբի պետ գեյ, Ի. Դիբիչը մեկնել է Պետերբուրգ, Ի. Պասկևիչը շտապում է Երևան: Կարծես թե նորություն չկա, ուշագրավը սակայն նամակի այն տողերն են, որ վերաբերում են հայազգի գեներալ Վալերիան Մադաթովին, և, որքան էլ տարակուսելի է, այնտեղ ասվում է, որ բոլորի կողմից ուրախությամբ է ընդունվել Մադաթովի հեռացումը Կովկասից: Ավելին, խոսվում է նրա թույլ տված սխանելի մասին. «Համընդհանուր բավարարվածություն կա, որ գեներալ, իշխան Մադաթովը լիովին հեռացվել է իր պաշտոնից և նրա փոխարեն Ղարաբաղի կառավարիչ է նշանակվել բավականին ցանկալի և բարի մի պետ: Երբ կատարվի արդարացի քննություն, ապա իշխան Մադաթովի կառավարման ժամանակի բացթողումներ և շատ չարաշահումներ կբացահայտվեն...»<sup>1</sup>: Հավելենք, որ, բավականաչափ քաջածանոթ լինելով հայազգի գեներալ Վ. Մադաթովի կատարած ռազմական սխրանքներին<sup>2</sup>, որոնց մասին ռուս պատմաբան Վ. Պոտտոն նույնիսկ մի ամբողջ գլուխ է նվիրել կովկասյան պատերազմներին նվիրված իր գրքում<sup>3</sup>, ավելին՝ Ներսես Աշտարակեհին, ով պատերազմի սկզբում խանդավառված էր մադաթովի հաղթանակներով, ներկայացված վավերագրում սակայն ակնհայտ հակադիր կարծիք է հայտնում: Այդուհանդերձ, մեզ այս տողերը խորհրդածելու առիթ են տալիս:

Մեկ այլ վավերագրում էլ, որ թվագրված է 1827 թ. մայիսի 17-ով, խոսվում է ռուսների կողմից Երևանի բերդը գրավելու հետ կապված դժվարությունների, պատերազմող ուժերի հարաբերակցության, Հասան խանի՝ Սարդարապատում փակվելու մասին: Այստեղ էլ կարծես թե նորություն չկա, սակայն մեր ուշադրությունը գրավեց այն հանգամանքը, որ նամակում նկատելի է, որ ռուս գեներալները երբեք էլ այն կարծիքին չեն եղել, թե Երևանի բերդը հեշտությամբ կարող են գրավել. «Երևանի բերդի ամրությունները դժվար կլինի վերցնել, – ասվում է հաղորդագրություններից մեկում: – Այս բերդում միայն զինված պարսիկների թիվն անցնում է 20.000-ը, որից 6 կամ 8 հազարն ընտիր հեծելազոր է և ուղարկվել է ռուսական ջոկատների վրա հարձակվելու նպատակով: ...երբ Երևանի սարդար Հասան խանի եղբայրն ականատես եղավ, թե ինչպես են ռուսները համառ դիմադրում, ավելին՝ երբ վիրավորվեց Իսմաիլ խանը և գերվեց, Հասան խանն անմիջապես փակվեց Սարդարապատի բերդում: Հեծելազորի մի մասը սպանվեց, իսկ մյուս մասը հասցրեց վերադառնալ բերդ»<sup>4</sup>:

Մեկ այլ վավերագրում էլ հաղորդվում է, թե կեղծ լուրեր են տարածվում այն մասին, որ իբր պարսիկները 200 հազար աշխարհագոր են հավաքել և շուտով շարժվելու են Երևան: Պարսից շահը, ահաբեկելով ռուսների կարծեցյալ դաժանությամբ, Երևանի բնակչությանը կոչ է անում պատրաստ լինել ռուսներից պաշտպանվելու համար: Պարսկաստանում խոսում են Կովկասի կառավարչապետի վարած նոր քաղաքականության մասին: Տեղեկություններ են հաղորդվում նաև Երևանի բերդի դիրքի, վիճակի, մթերքի պակասության, սարդարի նենգ դիտավորությունների և վախի մասին: Պարսիկները փորձում են հայ բնակիչներին փոխադրել երկրի խորքերը, նրանց հատկապես անհանգստացնում են Երևանի և Նախիջևանի խանությունների հայ բնակիչների վարքագիծը<sup>5</sup>: Նամակը թվագրված է 1827 թ. հունիսի 3-ով, ինչը նշանակում է, որ Երևանի բերդի գրավման նախապատրաստական փուլում ռուսական հրամանատարությունը կարևորել է Երևանի հայ բնակչության տրամադրվածության մասին տեղեկությունները:

<sup>1</sup> Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթ. 100, վավ. 10, թ. 1-2:

<sup>2</sup> Տե՛ս Հովհաննիսյան Հ., Ռուսական բանակի Սյուրատը, «Հայկական բանակ», 2001, № 4, էջ 91-100:

<sup>3</sup> Տե՛ս Потто В., Зима в Карабаге (Последние действия Мадатова), – в кн. «Кавказская война в отдельных очерках, эпизодах, легендах и биографиях», т. 3., СПб, 1888, с. 245-272.

<sup>4</sup> Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթ. 100, վավ. 10, թ. 2-3:

<sup>5</sup> Տե՛ս նույն տեղում, թղթ. 106, գ. 51, վավ. 16, թ. 1:

Դրանից քիչ առաջ՝ 1827 թ. մայիսի 11-ով է թվագրված նաև մեկ այլ վավերագիր՝ Վրաստանի կառավարիչ գեներալ Ն. Սիայագինի կոչը ուղղված հայ ժողովրդին: Ուշագրավ մեկ դիտարկում. այս էլ որերորդ անգամ դժվարին պահերին ռուսական հրամանատարությունը կոչով դիմում էր հայ ժողովրդին (հիշենք գեներալ Պ. Ցիցիանովի կոչը Արցախի հայերին՝ օգնության խնդրանքով 1805 թ.): «Կոչ հայերին: Անցյալ տարի մեր սահմանները ներխուժելու ժամանակից սկսած հայերը թշնամիների դեմ պայքարում աչքի են ընկել քաջությամբ, տոկունությամբ և հաստատակամությամբ..., ռուսական թագի հանդեպ անսահման նվիրվածությամբ: Տիրակալ կայսրը բարեհաճ ուշադրությամբ է վերաբերվել իրեն ջանադիր և հավատարիմ հայերի հանդեպ և թեպետ ռուսական զորքերը բավարար են թշնամուն առանց կողմնակի օգնության հաղթելու համար, սակայն Տիրակալ կայսրն ուզում է ներկա պատերազմում իր քաջարի զորքերի մեջ ունենալ հայերից կազմված հատուկ աշխարհագոր»<sup>1</sup>: Ակներև է, որ խոսքը հայկական աշխարհագորի համալրման մասին է, որի կազմավորումը սկսվել էր Թիֆլիսում դեռևս 1827 թ. մարտին: Սակայն մենք այդ ամենը վերագրում ենք արք. Ներսեսին: Փաստորեն կազմակերպման նախաձեռնությունը ռուսական իշխանություններինն է եղել, Ներսեսը միայն իրագործել է այդ նախաձեռնությունը: Վավերագրում այնուհետև խոսվում է, թե ինչպես են հայերն ընդունել այդ կոչը. «Արդեն հայտարարված կոչի երրորդ օրը՝ սկսեց կազմավորվել առաջին կամավորական ջոկատը, ընդունվեցին աստվածային աղոթքով, սրբապատկերներով, որոնք կատարեցին հոգևորականները...: Ես համոզված եմ, - ասվում էր այնուհետև Սիայագինի կոչում, - որ շատ այլ եղբայրակիցներ կցանկանան հետևել այս գովելի օրինակին, որի համար անհարաժեշտ եմ համարում հրապարակել հայկական աշխարհագորի կազմակերպման նախապայմանները...»<sup>2</sup> :

Այդ նախապայմանները բավականին հետաքրքիր են. ռուսական կառավարությունը հայ կամավորականներին խոստանում էր. «սեփական դրոշ, սեփական ջոկատ, ձեզ կտրվի նաև զենք...»<sup>3</sup>: Այժմ կոչի առավել ուշագրավ մասը՝ «հարստահարված Ձեր եղբայրների հանգստության համար, Ձեր ընտանքիների անվտանգության համար, Ձեր հայրենիքի պաշտպանության համար: Թիֆլիս, 1827 թվական: Թիֆլիսի նահանգապետ գեներալ ադյուտանտ Սիայագին»<sup>4</sup>: Ինչպես նկատեցինք, ռուսական հրամանատարությունը հայերին շահագրգռել է՝ շեշտադրելով ոչ թե ռուսներին ծառայելը, այլ սեփական հայրենիքը ազատագրված տեսնելու հեռանկարը: Այդ է պատճառը, որ կոչում ընդգծվել է հայ ժողովրդի հարստահարված լինելու հանգամանքը, ինչն ակնհայտորեն ցույց է տալիս, որ ռուսական կառավարությունը հայ ժողովրդի պարագայում առաջ է մղել պարսից լծից ազատագրվելու մոտիվը: Եվ ընդհանրապես, ռուսական կառավարության այս ձեռնարկը, որը, ինչպես արդեն նշեցինք, գալիս էր դեռևս ռուս-պարսկական առաջին պատերազմից, նպատակ ուներ օգտագործել հայկական զինական ուժը՝ քաջ գիտակցելով այդ ուժի կարևորությունը և արդյունավետությունը ռազմական գործողությունների ժամանակ: Ուստի պատահական չէ, որ ցարական կառավարությունն այդ օգնությունից օգտվեց նաև հետագա պատերազմների ժամանակ՝ ընդհուպ մինչև առաջին աշխարհամարտը:

Լազարյանների արխիվում ընդարձակ մեկ վավերագիր էլ նվիրված է Էջմիածնի վանքի և Օշականի հայտնի ճակատամարտերին և դրանց նախորդած դեպքերի նկարագրությանը: Երևանի խանությունից և Էջմիածնից ստացված տեղեկությունների հիման վրա Լազարյանները կազմել են ծավալուն մի հաղորդագրություն, որը լույս է սփռում 1927 թ. ամռան ընթացքում կատարված իրադարձությունների վրա: Այնտեղ կարդում ենք. «Գեներալ-լեյտենանտ Կրասովսկին գլխավոր հրամանատար Պասկևիչի հրամանով գտնվում է Երևանի բերդի պաշարման մեջ: Յետո նա ժամանեց Էջմիածնի վանք և շատ չանցած շարժվեց դեպի Արագած լեռը, որը 50 վեստի վրա է վանքից: Նրա տրամադրության տակ են մի քանի թնդանոթ և փոքրաթիվ զորական ուժ. ավելին, նրա հետ են նաև վիրավորներն ու հիվանդները: Երևանում ժողովուրդը գտնվում է վախի ու սպառնալիքի մեջ. չնայած բազմաթիվ խնդրանքներին, նրանք այդպես էլ ոչ մի օգնություն չեն

<sup>1</sup> Նույն տեղում, վավ. 45, թ. 1:

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> Նույն տեղում:

<sup>4</sup> Նույն տեղում, թ. 2:

ստացել<sup>1</sup>: Երևանի սարդարը և մյուս խաները չափազանց դժվարին իրավիճակում են...: Պարսիկների խորամանկություններն ու դաժանությունը անցել են բոլոր սահմանները...: Հանկարծակի արշավային հավաքներ են կազմակերպում, այդ թվում հրաման է ստացվել Էջմիածնի վանքի դեմ արշավանք ձեռնարկելու համար...: Աբաս-Միրզայի գլխավորությամբ հավաքվել է մեծ թվով զորք, որը բաղկաված է հեծելազորից և հետևակից..., իր եղբոր և երկու խաների հետ միասին ժամանել է և գրեթե հանկարծակի մոտեցել է Արաքսին, արագ տեղաշարժով անցել է գետը և շտապում է ամրանալ Սարդարապատում...»<sup>2</sup>: Ինչպես նկատում ենք, Լազայանների այս հաղորդագրությունը մանրակրկիտ տեղեկություններ է պարունակում, ինչը կրկին հաստատում է, որ Լազարյանները ջանացել են ճշգրիտ տեղեկատվություն ստանալու համար: Այդուհանդերձ, շարունակելք հետևել տեքստում ներկայացված գործողություններին. «Արթեպիսկոպոս Ներսեսն անձամբ ցույց տվեց քաջության օրինակ. լիցքավորում և կրակում էր թնդանոթից, ողջ հոգևորականությունը և հարևան գյուղերի բնակչությունը հերոսաբար դիմադրում էին...»<sup>3</sup>: Գեներալ Կրասովսկին, տեղեկանալով այս հանկարծակի հարձակման մասին և գտնվելով 40 վերստ հեռավորության վրա, ջոկատին հրամայեց դիմավորել թշնամուն: ...Աշտարակում տեղի ունեցավ արյունալի ճակատամարտ, որը շարունակվեց մոտ 10 ժամ: Երկու կողմից պայքարը հավասար էր: Հուսահատությունը և միևնույն ժամանակ, քաջության ոգին համակել էր բոլորին: Ռուսները կռվում էին քաջաբար, իսկ պարսիկներն արհաբար ետ էին մղում այդ հարվածները: Ինքը Աբաս-Միրզան, իր եղբոր և մյուս խաների հետ միասին քաջության օրինակներ էին ցույց տալիս: Սկզբում պարսկական զորքերը նեղեցին կազակներին, և պարսիկները շոտով առավելություն ստացան...»<sup>4</sup>: Այս նկարագրությունը մեծապես տարբերվում է ռուսական ռազմական գրականության մեջ ներկայացվածից, քանի որ պարսկական զորքի նույնիսկ ամենափոքր քաջության մասին տվյալները, որպես կանոն, ռուսական աղբյուրներում բացակայում են: Ուստի եզրակացությունը մեկն է. ներկայացված այս հաղորդագրությունը կարելի է համարել իրականությանն ամենամոտը և որոշակի իմաստով նույնիսկ նորություն մինչ այժմ եղած վերլուծականների մեջ: «Ռուսական զորքը, - ասվում է այնուհետև վավերագրում, - հայկական աշխահագորի օգնությամբ այդ առավելությունն ի չիք դարձրին: Ռուսները նետվեցին առաջ և փորձեցին ճեղքել-անցնել Էջմիածին, ավելին՝ տեսնելով, որ պարսիկները հեռացել են 25 վերստ Էջմիածնից, որպեսզի խորամանկությամբ խաբեին ռուսներին և կրկին վերադառնալով ճակատամարտել, սակայն ռուսական զորքը կանգ առավ վանքի մատույցներում և խաբեյությանը չտրվեց: Պարսիկների կրած կորուստները սպանվածների, վիրավորների և գերիների թվով զգալի էր, սակայն, քիչ չէր նաև սպանված ռուս սպաների և զինվորների, վիրավորների թիվը: Այս հաղթանակի առթիվ Թիֆլիսում տեղի ունեցավ պատարագ՝ հրանոթային համազարկով»<sup>5</sup>: Համաձայնելք, որ շեշտադրումների տեսակետից վավերագիրը, անշուշտ, պատմագիտական հնչեղություն ունի և եթե ոչ առանցքային, ապա անկասկած, կարևոր մանրամասներ է հաղորդում մինչ այժմ մեզ հայտնի եղելությունների վերաբերյալ:

Ուշագրավ է նաև վավերագրի այս հաստատումը. «Չնայած պարսիկները հաջողություն չունեցան, - ասվում է վավերագրում, - սակայն, նրանք նույնպես ոգևորված էին՝ կարծելով, թե ռուսներին նկատելի կորուստներ են պատճառել...: Վերջին հաղորդումների համաձայն, Աբաս-Միրզան խոյից հեռացել է դեպի Մանա քաղաքը...»<sup>6</sup>: Ներկայացված վավերագիրը մեզ մղում է նաև հանգելու պատմագիտական այն հաստատմանը, որ Օշականի կամ Աշտարակի ճակատամարտը, ինչպես հանդիպում է երբեմն ռուսական աղբյուրներում, պետք է համարել պարսիկների վերջին գլխավոր գործողությունը հայաստանյան ճակատում: Ակնհայտ է, որ Օշականից հետո պարսիկներն այլևս ի վիճակի չէղան դիմադրելու ռուսներին և, ինչպես ցույց տվեցին պատերազմական հետագա իրադարձությունները, ռուսներն այլևս առանձին դժվարություն չէին կրում

<sup>1</sup> Նույն տեղում, վավ. 67, թ. 1:

<sup>2</sup> Նույն տեղում, թ. 2-3:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում, թ. 4:

<sup>4</sup> Նույն տեղում, թ. 5-6:

<sup>5</sup> Նույն տեղում, թ. 6-7:

<sup>6</sup> Նույն տեղում, թ. 7-8:

պարսիկներին հաղթելու խնդրում, և դա էր պատճառը, որ նրանք Նախիջևանում և Լույսիս Երևանում համառ դիմադրություն չկազմակերպեցին ռուսների դեմ, ինչը հատուկ էր նրանց: Ուստի, մեր կարծիքով, Օշականում արդեն լուծվեց պատերազմի ելքը: Մեր կողմից արված այս եզրակացությանն է հանգեցրել վավերագրի այն հաստատումը, համաձայն որի՝ ճակատամարտից հետո «Պարսկաստանում ռազմական պաշարի խիստ կարիք է զգացվում: Թանկությունն ընդհանրապես տիրել էր ողջ Պարսկաստանին: Այս ամենին միացել են նաև անտանելի շոգերը, ռազմական շարժերը չափազանց դժվարացել են...: Որպեսզի ուրախացնեն Շահին և պարսիկներին մղեն դիմադրության,- ասվում էր այնուհետև փաստաթղթում,- Աբաս-Միրզան սուրհանդակներ է ուղարկել երկրի խորքերը, թե իբր իրենք հաղթել են ռուսական բանակին՝ ակնկալելով, որ երկրի բնակչությունը կհամալրի զորքը և պահուստներ կտրամադրի..., ասվում էր նաև, թե իբր պատրաստվում են նոր հաղթանակներ տոնել ռուսական բանակի հանդեպ»<sup>1</sup>:

Պարսկական արքունիքն, իհարկե, քաջ գիտակցում էր, որ միայն դրանով կարելի է ոգևորել պաշարված Երևանին և փրկել պարսիկների վերջին գլխավոր ռազմակայանը Արևելյան Հայաստանում. «Երևանի Սարդարին և նրա եղբորը՝ Հասան խանին ոգևորելու համար անձամբ խոյ էին ժամանել Շահը և Աբաս Միրզան. նրանք նամակ են ուղարկել սարդարին...»: <sup>2</sup> Սակայն, ինչպես ցույց տվեցին հետագա ռազմական գործողությունները, այս քայլերը պարսկական զորքին վերջնական ջախջախումից փրկելու անհուսալի փորձերն էին միայն. «Ռուսական գլխավոր ուժերի արշավը դեպի Նախիջևան՝ նոր ու ավելի մեծ դժգոհությունների ալիք բարձրացրեց Պարսկաստանում,- ասվում էր փաստաթղթում,- Թավրիզում արդեն նկատելի են պաշարների սակավությունը, որոշ գյուղերում Լույսիս սով է սկսվել: Պարսկական շատ պաշտոնյաների ընտանիքներ, այդ թվում նաև Աբաս-Միրզայի ընտանիքը, հեռացել են Պարսկաստանի խորքերը: Պարսկական կառավարությունն իր կոչերով փորձում է ոգևորել ժողովրդին, հատկապես բնիկ պարսիկներին՝ համալրելու աշխարհագորը: Կոչերում ասվում է, թե իբր ռուսները ամայացրել են Պարսկաստանը. Արաքսից այն կողմ զորք և բնակչություն արդեն չի մնացել...»: <sup>3</sup> Ավարտելով վավերագրի ներկայացումը, նշենք, որ նրանում աղբյուրագիտական սորություններն ակնհայտ են:

Լազարյանների արխիվից ներկայացվող հաջորդ փաստաթուղթը ևս բավականին ուշագրավ է, թեպետ վերնագիրն առաջին հայացքից էական ոչինչ չի հուշում՝ «Որոշ կանխատեսումներ Վրաստանի և նրան հարակից մարզերի մասին»: Վավերագիրը բաժանված է ենթաժինների. առաջինը վերնագրված է «Պարսկաստանի հետ պատերազմը և հաղթանակի պտուղները»: Կարդում ենք. «Կայսր Նիկոլայ Առաջինի փառավոր կառավարման օրոք Պարսկաստանի հետ հարաբերությունների խզումը, սկսված պատերազմում կրած պարտություններն ու տարած հաղթանակները Ռուսաստանին բերեցին շահավետ պայմանագրի ստորագրմանը: ...Հնուց եկած բաղձալի նպատակն իրագործվեց. հաստատուն սահմանը մինչև Արաքս գետն արդեն իրողություն է»<sup>4</sup>: Փաստաթղթում այնուհետև նշվում էր պատերազմի հաղթության արդյունքում Ռուսաստանին միացված մարզերից սպասվող տնտեսական ու քաղաքական օգուտները: Սակայն դա չէ, որ ցանկացել են ընդգծել փաստաթղթի հեղինակները (ամենայն հավանականությամբ նրա վրա աշխատել են Լազարյանները և նրանց հրավերով՝ հայազգի երևելիները, որոնք էլ հետագայում կազմեցին Հայաստանի ինքնավարության հայտնի նախագիծը՝ Հ.Հ., Կ.Բ.): Մեզ այդ համոզմանն է բերում վավերագրի հաջորդ ենթավերնագիրը՝ «Հայոց թագավորության վերականգնման գլխավոր նպատակը»: Այս բաժնում ներկայացված են բոլոր այն հիմնավորումները, որոնք թույլ կտային Ռուսաստանին միացած նորանվաճ մարզերի տարածքում վերականգնել հայկական թագավորությունը. Այդ հիմնավորումները չափազանց ուշագրավ են. այնտեղ կարդում ենք. «Որպեսզի հնարավոր լինի Հայ ժողովրդին ավելի շահագրգռել Ռուսաստանում հաստատվելու համար՝ հատկապես նոր ձեռք բերված մարզերում, որպեսզի ոգևորենք նշանավոր հոգևորականներին ունենալու արժեքավոր ժողովուրդ՝ աջակցելու ունենալ կամավոր սահմանային զին-

<sup>1</sup> Լույս տեղում, թ. 9:

<sup>2</sup> Լույս տեղում, թ. 10-11:

<sup>3</sup> Լույս տեղում, թ. 12:

<sup>4</sup> Լույս տեղում, վավ. 92, թ. 1:

վորականություն, մեր գլխավոր ու միակ եզրակացությունն... այն է, որ Տիրակալ Կայսրն իր բարձրագույն տիտղոսներին... ավելացնի Չայաստանի թագավոր անունը: Շատ մարզեր, ինչպիսին հնագույն Երևանի, Նախիջևանի, Ղարաբաղի, Շաքիի և Շամախու մարզերն են՝ Էջմիածնի վանքի հետ միասին, կկազմեն Հնագույն Հայկական թագավորության տարածքը»<sup>1</sup>: Ակներև է, որ հենց այնպես Լազարյանների գրասենյակում այս փաստաթուղթը չէր հայտնվի, անկասկած է նաև, որ այն պատրաստվել է ցարական արքունիք ներկայացնելու նպատակով: Անշուշտ, խոսքը խաչատուր Զրիստոփոր Լազարյանի և Ալեքսանդր Խուդաբաշյանի կողմից կազմված Հայաստանի ինքնավարության նախագծի մասին է, ավելին՝ փաստաթղթում արված ջնջումներն ու վերածնակերպումները վկայում են, որ տեքստի վրա քրտնաջան աշխատանք է տարվել: Ուշագրավ մեկ հանգամանք ևս գրավեց մեր ուշադրությունը. շարադրանքում հայկական թագավորության սահմանների և հայկական թագավորության վերածնունդի մասում որևէ ջնջում կամ վերածնակեպում արված չէ. այսինքն՝ նպատակը միանգամայն ընդունելի է եղել և կասկածի տեղիք չի տրվել կազմողների կողմից: Միակ ջնջումն այն է, որ Շաքիի մարզի հիշատակումը ջնջվել և տեղադրվել է Ղարաբաղից հետո<sup>2</sup>:

Հաջորդ ենթավերնագիրը՝ «Նպատակների իրագործման հետևանքները», ևս ուշադրության արժանի է: «Համընդհանուր օգտակարության և ապագա ժամանակների տեսակետից, ինչպես մոտակա երկրներում Պարսկաստանում և Թուրքիայում, այնպես էլ հեռավոր երկրներում նույնիսկ մինչև Հնդկաստանում ապրող հազարավոր հայերի հարստությունները կորվեն Հայաստանի թագավորի ամենահզոր հովանու ներքո»<sup>3</sup>: Ակնհայտ է, որ նախագծի հեղինակներն առաջին հերթին (անշուշտ, նկատի ունենք Լազարյաններին՝ Հ.Հ., Կ.Բ.), ընդգծել են տնտեսական գործունը՝ քաջ գիտակցելով ռուսական կառավարության նկրտումները կովկասյան տարածաշրջանում; Շարունակենք հետևել փաստաթղթին: «Երբ որ բարձրյալի համաձայնությունը իրականություն դառնա, ապա Բարձրագույն Պատրիարքը, որպես ազգի գլխավոր, հայկական ավանդույթի համաձայն, Տիրակալին կհանձնի իր պատրիարքական (կաթողիկոսական) հրովարտակը, որպես հպատակության համընդհանուր երաշխիք ինչպես մոտակա մարզերի, այնպես էլ Հնդկաստանում բնակվող հայերի համար: Այս բարեհոգությունը կոզևորի ողջ հայ ժողովրդին, հատկապես Թուրքիային և Պարսկաստանին ենթակա տարածքներում, քանի որ այս տերությունները ժողովրդագրական և տնտեսական տեսակետից շատ բան կկորցնեն...»<sup>4</sup>: Ինչպես նկատում ենք, Լազարյանների բերած փաստարկները լիովին հիմնավոր են և պատճառաբանված. ակնհայտ է, որ նրանք իրական վիճակին գրեթե ոչինչ չեն ավելացրել կամ չեղածը իրականի տեղ ներկայացրել: Բերված փաստարկները լիովին համապատասխանում են այդ ժամանակ հայության ունեցած դիրքին ու տնտեսական հնարավորություններին: Նկատենք նաև, որ թեպետ այս ծրագիրը ամենտարբեր պատճառներով չիրագործվեց, որոնց մեջ գլխավորը, իհարկե, քաղաքական դրդապատճառներն էին, սակայն փաստաթուղթն ինքնին յուրատեսակ վերլուծություն է համայն հայության տնտեսական ներուժի գնահատության առումով (ցանկալի կլիներ այդպիսի մի փաստաթուղթ էլ ներկա ժամանակի համար կազմվեր-Հ.Հ., Կ.Բ): Լազարյանները այդ հիմնավորումը ևս բերում են. «Երբ հույները կորցրեցին իրենց հանդեպ վստահությունը Թուրքիայում, - ասվում է այնուհետև վավերագրում, - կարևոր բոլոր պաշտոնները զբաղեցրին հայերը, որոնք աչքի էին ընկնում բացառիկ ընդունակություններով և նախաձեռնողականությամբ»<sup>5</sup>: Համաձայնվենք, որ առանձին վերապահումներով բերված փաստարկներն էլ, անշուշտ, ուշագրավ են:

Երրորդ ենթաբաժինը վերնագրված է «Ազդեցությունը հայ ժողովրդի վրա և կոչ հայ ժողովրդին»: «Հայոց թագավորը, ինչպես հատուկ է հայոց հին թագավորության վերականգնմանը, իր ազդեցությունը կտարածի բոլոր հայերի վրա, որոնք ապրում են Թուրքիայի եվրոպական և ասիական մասերում, ավելին, ողջ ասիական մայրցամաքում և հյուսիսայի Աֆրիկայում ապրող հայերի վրա: Բարձրագույն պատրիարքը, հնագույն օրենքի համաձայն հրավարտակով կդիմի Կ.

<sup>1</sup> Նույն տեղում, թ. 2-3:

<sup>2</sup> Նույն տեղում, թ. 3:

<sup>3</sup> Նույն տեղում, թ. 4:

<sup>4</sup> Նույն տեղում,

<sup>5</sup> Նույն տեղում, թ. 5-6:

Պոլսի հայոց պատրիարքին, Չմուռնիայի, Երուսաղեմի և Տրապիզոնի և մյուս մարզերի թեմակալ առաջնորդներին, ինչպես նաև Չնդկաստանում ապրող հայերին... քանի որ այս բարեկամությունը միջոց կդառնա մեր ժողովրդագրությունը բարելավելու համար...»<sup>1</sup>:

Չորրորդ հիմնավորումը ևս վերնագիր ունի՝ «Բնակչությունը սահմանների մոտ»: «Ռուսաստանի օգուտի համար լեռնականների, թուրքերի, պարսիկներ ներխուժումներից իր սահմանների հանգստությունը պահպանելու համար, անհրաժեշտ է, որ այդ նոր ենթակա մարզերի սահմաններին ունենա մեծաթիվ քրիստոնյաներից բաղկացած՝ հայերի գերակշռությամբ զորք, որպես Ռուսաստանին մեծապես նվիրվածների»<sup>2</sup>:

Եվ վերջապես հինգերորդ հիմնավորումը վերնագրված է՝ «Չոզևոր դասի աջակցությունը»: Նախագծի հեղինակները գտնում են, որ այս խնդիրներն իրագործելու համար անհրաժեշտ է համագործակցության հրավիրել հայ բարձրաստիճան հոգևորականությանը հատկապես թեմակալ առաջնորդ արքեպիսկոպոս Ներսեսին, ով «կօզնի հարևան երկրներից հայերի ներգաղթին»<sup>3</sup>: Փաստորեն, ինչպես նկատելի է փաստաթղթից, նախագծի հեղինակները բավականին հեռու գնացող նպատակներ են ունեցել, և այն անշուշտ կարելի է համարել համահայկական նախագիծ, քանի որ վերաբերում էր հայության ստվար հատվածին: Ենթադրելի է՝ այս և նմանատիպ այլ ծրագրերն այդպես էլ կյանքի չկոչվեցին, սակայն այդ խնդիրների լուծմանը միտված նախագծերի մշակումն անշուշտ վկայում է Լազարյանների համահայկական ընդգրկվածության մասին:

Լազարյանների արխիվից ներկայացվող վերջին երկու վավերագիր-նամակները վերաբերում են միևնույն խնդրին: Ներսես արքեպիսկոպոսին Բեսարաբիայի թեմակալ առաջնորդ Նշանակելու շուրջ ծավալված իրադարձություններն են: Երկու նամակների հեղինակն էլ կայսերական ժանդարմերայի պետ, գեներալ Ալեքսանդր Բենկենդորֆն է: Բնութագրական է նաև, որ երկու նամակներն էլ գրվել են 1828 թ. մարտին, այսինքն՝ ռուս-թուրքական պատերազմի նախօրյակին: Նամակներից առաջինն ուղղված է Ամենայն հայոց կաթողիկոսին. այն բազում առումներով ուշագրավ է, քանի որ արտահայտում է ռուսական կառավարության դիրքորոշումը հայկական հարցում: Այս էլ որբորդով անգամ հայոց պատրիարքին ուղղված նամակում ռուսական կառավարությունը արտահայտում է իր շնորհապարտությունը հայ ժողովրդին: «Ամենայն հայոց սրբազան և գլխավոր պատրիարքին: Սիրելի Վեհափառ: Դարերով փորձություն անցած ողջ հայ ժողովրդի նվիրվածությունը ռուսական կայսերական աթոռին արժանացել է ռուսական կառավարության և ռուսական ինքնակալի հատուկ ուշադրությանը և մի քանի անգամ այս ժողովուրդը Բարձրագույնի կողմից արժանացել է գնահատության Ռուսաստանի հանդեպ անսահման նվիրվածության, հատկապես Պարսկաստանի դեմ վերջին պատերազմում»<sup>4</sup>: Սակայն խնդիրն այն է, որ ռուսերենով գրված այս նամակի առանձին հատվածներում ջնջումներ կան: Այնպիսի տպավորություն է, որ հայերին վերաբերվող փաստաթղթերը մինչև ռուսաց արքունիք հասնելը, խմբագրվել և վերջնական տեսքի է բերվել Լազարյանների գրասենյակում: Փաստն ինքնին արտառոց չէ, սակայն կասկած չի հարուցում նաև այն հանգամանքը, որ Լազարյանները հենց այնպես չեն հեռացրել կամ ավելացրել այն կամ այն հատվածը, և չի կարելի հաստատապես պնդել, թե Լազարյաններն իրենց նպատակահարմարությամբ են կատարել այդ միջամտությունները: Բայց այն, որ այդ միջամտությունները կատարվել են՝ նկատի ունենալով ռուսական քաղաքականության նրբերանգները Չայաստանին վերաբերող տարբեր հարցում, կասկածից դուրս է:

Այդուհանդերձ, նամակում բարձր է գնահատվում հայոց հայրապետի ծառայությունները Ռուսաստանին, հաղորդվում է նաև պատերազմի ավարտի հետո նրան Ալեքսանդր Նևսկու բարձր շքանշանի արժանացնելու մասին: Առաջին հայացքից անսովոր ոչինչ չկա. ռուսական կառավարությունն ի դեմս հոգևոր առաջնորդի իր հերթական շնորհապարտությունն է հայտնել հայ ժողովրդին: Վավերագրի ներածականում հայ ժողովրդի հանդեպ ռուսաց տիրակալի հատուկ ուշադրության ընդգծումն է. «Բարձրայի, մեր տիրակալի սրբազան կամքը և բոլոր հայերի հանդեպ հատուկ հովանավորությունը հիմնված է այնպիսի բարեպաշտ-փրկարարական նպատակի վրա,

<sup>1</sup> Նույն տեղում,

<sup>2</sup> Նույն տեղում, թ. 7-8

<sup>3</sup> Նույն տեղում, թ. 8:

<sup>4</sup> Նույն տեղում, վավ. 142, թ. 1:

որպեսզի այս ժողովուրդը միշտ (բառն ավելացված է՝ Յ.Յ., Կ.Բ.) երկրում օգտվի բարեկեցություն-  
 նից, հնազանդվի օրինական իշխանություններին և որ Ռուսաստանի հանդեպ նվիրվածությամբ  
 չխաթարվի համընդհանուր խաղաղությունը, չենթարկվի հալածանքների և չարաշահումների»<sup>1</sup>։  
 Փաստորեն թեև նոր էր ավարտվել պատերազմը և Արևելյան Հայաստանի միացումն արդեն ի-  
 րողություն էր, արդեն հայ ժողովրդին տեղեկացվում էր իրեն սպասվող ճակատագրի մասին։ Այժմ  
 վավերագրի ջնջված մասը. «Բեսարաբիայում, Մոլդովայում և Վալախիայում և թուրքական տի-  
 րույթներում հայերի ներկայիս դրությունը պահանջում է հատուկ ուշադրություն և հոգածություն.  
 Նրանց մեծ մասը գտնվում է թուրքական տիրապետության տակ և Քրիստոնեական օրենքի տե-  
 սակետից կարեկցանք է առաջացնում նրանց ճակատագրի հանդեպ, և մեզ համոզում է՝ նրանց  
 հարստահարումից և վտանգավոր հետևանքներից ազատելու համար...»<sup>2</sup>։

Ավնհայտ է, որ այս «անդրադարձը» վերաբերում է արևմտահայերին և, անկասկած, պայ-  
 մանվորված էր սկսվելիք ռուս-թուրքական պատերազմի գործոնով։ Սակայն, հավանաբար, ռու-  
 սական կառավարությունը վաղ է համարել կամ չի ցանկացել թմբկահարել արևմտահայերի ա-  
 զատագրությունը ռուս-թուրքական պատերազմում, ուստի այդ պարտականությունը դրել են  
 հայոց հայրապետի վրա. «Ձեզ, սրբազան պատրիարք, որպես հայ ժողովրդի գերագույն հովիվ,  
 ջանադրաբար առաջարկում ենք համագործակցել Ձեր հրահանգներով՝ այդ բարի նպատակը  
 իրագործելու համար»<sup>3</sup>։ Ավելին, վավերագրում հստակ խոսվում է թուրքական տիրապետության  
 տակ գտնվող հայկական մարզերի բնակչությանը առաջիկա պատերազմում համագործակ-  
 ցության մղելու մասին, թեպետ թուրքական բառը ջնջված է և փոխարինվել է Բեսարաբիայով և  
 Վալախիայով, ավելին, այդ գործի համար հստակ նշված է Ներսեսի անունը. «Սկզբի համար հար-  
 կավոր է վերջերս մահացած հայոց Բեսարաբիայի թեմի առաջնորդ արքեպիսկոպոս Գրիգորիի  
 տեղում Ձեր սրբազնագույն ցանկությամբ ուղարկել մեկ այլ արքեպիսկոպոս կամ տեղապահ,  
 սակայն որ ընտրվի ունակ այնպիսի հոգևորական, որը հուսալի է և արժանի կլինի, ինչպիսին  
 ժամանակին Հովսեփ Արղության-Երկայնաբազուկն էր..., ինչպես նաև ներկայիս Վրաստանի թե-  
 մակալ առաջնորդ Ներսես արքեպիսկոպոսը, որն արժանացել է Կայսր Տիրակալի ուշադրությա-  
 նը»<sup>4</sup>։ Այժմ արդեն լիովին հասկանալի է, թե ինչու է ակնարկ արվում Ներսես արքեպիսկոպոսին։  
 Երկրորդ՝ վավերագիրն աներկբա հաստատում է այն իրողությունը, որ մինչև ռուսական արքու-  
 նիք հասնելը, հայկական բոլոր գործերը (այս տեսակետից մեր նկատառումը միանշանակ է՝ Յ.Յ.,  
 Կ.Բ.) վերախմբագրվում էին Լազարյանների գրասենյակում։ Ի դեպ, հայոց կաթողիկոս Եփրեմին  
 ուղարկված նամակում Լազարյանների մասին ևս հիշատակություն կա և խմբագրված չէ. «Կա-  
 րող էք հաստատական լինել, Սրբազնագույն պատրիարք, թե որքան բարեհաճ է հայ ժողովրդի  
 հանդեպ Կայսր Տիրակալը և որ Ռուսական գահի հանդեպ հայ ժողովուրդը պահպանում է իր  
 նվիրվածությունը։ Ազգային գործերի և այդ նպատակով գործադրված ջանքերի մասին բոլոր  
 մանրամասնություններով հանդերձ, ինչպես նախկինում, այնպես էլ այժմ, Ձեզ հաղորդում է պե-  
 տական խորհրդական Քր. Լազարևը, որը Բարձրյալի կամքով այժմ գտնվում է մեզ մոտ ծառա-  
 յության մեջ. նա առաջիկայում ևս կգտնվի այդ կարգավիճակում...»<sup>5</sup>։

Ռուս բարձրաստիճան պաշտոնյայի գրառման ավարտը ևս ուշագրավ է. «Ձեր բոլոր գոր-  
 ծողություններում հարկավոր է չափազանց զգուշավորություն ցուցաբերել (կարելի է պատկե-  
 րացնել, թե Եփրեմի նման երկչոտ ու զգուշավոր պատրիարքն ինչպես կնդուներ այս խոսքերը՝  
 Յ.Յ., Բ.Կ.), որպեսզի Ձեր նպատակների մասին, որոնք ուղղված են համայն հայության բարօրու-  
 յանը, ոչ մի դեպքում չպետք է բացահայտվեն Կոնստանդնուպոլսի հետ հարաբերությունների  
 ժամանակ (Բենկենդորֆի ակնարկն, իհարկե, հասկանալի է. Յ.Յ., Բ.Կ.), քանի որ այս զգուշավո-  
 րությունը կուղեկցվի օգտակար և հաջող ձեռնարկերով և կծերբազատի Ձեզ ամեն տեսակ ան-

<sup>1</sup> Նույն տեղում։

<sup>2</sup> Նույն տեղում։

<sup>3</sup> Նույն տեղում, թ. 2։

<sup>4</sup> Նույն տեղում։

<sup>5</sup> Նույն տեղում, թ. 3։

հաճո հետևանքներից: Ավելի պարզ դարձնելու համար այս նամակը կթարգմանվի հայերեն լեզվով»,- ավարտում է իր նամակը Ալեքսանդր Բենկենդորֆը<sup>1</sup>: Այս նամակը հայ ժողովրդի հանդեպ ռուսական կառավարության իրական նպատակների առումով չափազանց բնութագրական է: Միայն թե այդ օգտակարությունը և հաջողությունն այդպես էլ հարստահարված հայ ժողովրդի կարևոր մի հատվածի համար իրականություն չդարձավ՝ «Կոնստանդնուպոլսի» հետ ռուսական արքունիքի անհետևողականության պատճառով:

Իսկ վերջին՝ 141-րդ վավերագիրը, կրկին գեներալ Ալեքսանդր Բենկենդորֆի նամակն է՝ ուղղված Ներսես արքեպիսկոպոսին: Ուշագրավ է, որ այս նամակի սկիզբը գրեթե չի տարբերվում նախորդից. «Հայերի ներկա դրությունը թուրքական տարածքներում (հետաքրքրական է, որ այստեղ էլ, «թուրքական» բառը ջնջվել և փոխարինվել է՝ «բոլոր» բառով Յ.Յ., Բ.Կ.)... իր վրա է սևեռել Մեր Կայսր Տիրակալի բաեհոգի ուշադրությունը, հատկապես ողջ հայ ժողովրդի վրա միակ և գլխավոր նպատակով՝ որպեսզի այս ժողովուրդն օգտվի բարեկեցությունից բոլոր երկրներում, ենթարկվի իշխանություններին...»<sup>2</sup>: Տարբերությունն արդեն հաջորդ մտքի մեջ է. «Այս բարեհաճությամբ էլ Կայսր Տիրակալը ցանկացել է, որ ես դիմեմ Ձերո՞ւ Բարեճնությանը,- ասվում էր այնուհետև Բենկենդորֆի նամակում,- իրավիրելով Ձեզ Բեսարաբիայի թեմ՝ հարակից շրջանների և մարզերում ապրող հայերի թեմակալ առաջնորդ, որպես փորձառու և ջանասեր Ձեր հայրենակիցների հարցում, ինչը դուք կհամարեք ցանկալի»<sup>3</sup>: Նամակի այս տողերը մեկ անգամ ևս հաստատում են այն պնդումը<sup>4</sup>, որ Ներսես Աշտարակեցու Բեսարաբիա ուղարկելը չի կարելի դիտարկել որպես կառավարչապետ Ի. Պասկևիչի կողմից կազմակերպած աքսոր, այլ թելադրված էր ռուս-թուրքական պատերազմում Բեսարաբիայի և Վալախիայի հայերին ոտքի հանելու ռուսական կառավարության հետամուտ նպատակով: Իսկ որ այդ գործում Ներսեսն իրավամբ հավասարը չուներ, քաջ գիտակցում էին ռուսական իշխանությունները, ի դեպ՝ Ի. Պասկևիչը նույնպես: «Ձեր անձնական մասնակցությունը հայ ժողովրդին այլահավատներից ազատելու գործում, անկասկած, ցանկալի հաջողություն է խոստանում: Ուստի խիստ անհրաժեշտ է, որ չափազանց զգուշությամբ (հետաքրքիր է, որ նույն արտահայտությունը արված է նաև Եփրեմին ուղղված նամակում Յ.Յ., Բ.Կ.) հավատարիմ մարդկանց միջոցով կամ անձնապես ուղղակի հարաբերություն հաստատեք Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքի և մյուս հոգևորականների հետ, որպեսզի նրանցից յուրաքանչյուրը իր հնարավորությունների չափով համագործակցի Ձեզ հետ: Ուստի համընդհանուրի բարօրության համար անհրաժեշտ է կանխամտածված քայլեր, որպեսզի ոչ մի դեպքում մեր մտադրությունները հայտնի չդառնան: Ավելի պարզության համար նամակը կթարգմանվի նաև հայերեն»<sup>5</sup>: Նկատելի է, որ նամակն առանձին բացառություններով նախորդի կրկնությունն է, թեպետ հասկանալի են ռուսական կառավարության նպատակներն այս խնդրում: Ավելին, այն հուշում է, որ Ներսեսի նշանակմամբ ռուսական կառավարությունը միայն Բեսարաբիայի հայերի աջակցության խնդրի լուծմամբ չի բավարարվել, ինչպես ընդունված է համարել մեզանում. նամակում ակնհայտ է Կ. Պոլսի հայոց պատրարքարանին դեպի ռուսական շահերը թեքելու ռուսական կառավարության նկրտումը. «Հաղորդելով Ձեզ այս մասին, թախանձագին խնդրում եմ Ձեզ ինձ տեղեկացնեք Ձեր կողմից նախատեսվող ձեռնարկների մասին»<sup>6</sup>: Կարծում ենք՝ Ալեքսանդր Բենկենդորֆի նամակը ռուսական կառավարության արտաքին քաղաքական նպատակների բացահայտումների առումով բնութագրական է և ուշագրավ:

Ամփոփենք: Մատենադարանի Լազարյանների արխիվից ներկայացված վավերագրերը նոր լույս են սփռում XIX դ. առաջին երեսնամյակին Հայաստանում տեղի ունեցած իրադարձությունների ուսումնասիրության վրա և նոր երանգներ են հաղորդում մինչ այդ պատմագիտությանը հայտնի փաստերին:

<sup>1</sup> *Նույն տեղում:*

<sup>2</sup> *Նույն տեղում, վավ. 141, թ. 1:*

<sup>3</sup> *Նույն տեղում:*

<sup>4</sup> *Տե՛ս Հովհաննիսյան Յ., Հայագիտությունը Ռուսաստանում (19-րդ դար, պատմագիտություն), Ե., 2004, էջ 350-352; նույնի՝ Ներսես Աշտարակեցի, Պաշտպան հայրենյաց, «Էջմիածին» ամսագիր, 2000, № Ե, էջ 79-89:*

<sup>5</sup> *ՄՄ, Լազարյանների արխիվ, թղթ. 100, վավ. 141, թ.2:*

<sup>6</sup> *Նույն տեղում:*



**Айказ Оганесян, Карен Байрамян, НОВОВЫЯВЛЕННЫЕ ДОКУМЕНТЫ ИЗ АРХИВА ЛАЗАРЕВЫХ.** Архив Лазаревых в Институте древних рукописей Армении, Матенадаране, отличается обилием писем. Авторы большинства писем – русские и армянские политики XIX в., представители высшего духовенства, словом, люди, оказавшие большое влияние на происходившие в то время политические события. Несомненно, некоторые из них руководствовались патриотическими побуждениями, другие – собственными интересами. Тем не менее, эти письма являются неотъемлемой частью истории Армении, из них можно получить ценные сведения об исторических событиях того времени, а также составить четкое представление об общественной и политической жизни Армении.

Вместе с тем, новизна этих документов заключается не только в том, что они описывают ту или иную военную операцию или политическую ситуацию. По нашему мнению, проблема заключается в мировоззрении армянских и русских деятелей: если для русских деятелей ключевым являлся процесс покорения Кавказа и, в частности, Восточной и Западной Армении, то для армянских деятелей важным фактором этого процесса было освобождение своей исторической родины в истинном и широком смысле этого слова. С этой точки зрения представленные в публикации письма и рапорты армянских и русских деятелей содержат важную информацию, сообщают новые подробности об уже известных историографических фактах.

**Ключевые слова:** Матенадаран, архив Лазаревых, документы, русско-персидская война, Восточная Армения, русская политика, письма, рапорты.

**Haikaz Hovhannisyan, Karen Bayramyan, NEWLY REVEALED DOCUMENTS FROM THE LAZAREVS ARCHIVE.** Lazarevs' archive of the Institute of Ancient Manuscripts of Armenia - Matenadaran is distinguished by an abundance of letters. The authors of most letters in the 19th century are Russian and Armenian politicians, representatives of the higher clergy, in a word, people who had a great influence on the ongoing political events. Undoubtedly, some were guided by patriotic motives, others by their own interests, etc. Nevertheless, these letters are an integral part of the history of Armenia, from them we can get valuable information about the historical events of that time, as well as have a clear idea of the public and political life of Armenia.

However, the novelty of these documents is not that they describe a particular military operation or political situation. In our opinion, the problem lies in the worldview of Armenian and Russian figures; while for the Russian political figures the key was the process of conquering the Caucasus and in particular the Eastern and Western parts of Armenia, for the Armenian politicians an important factor in this process was the liberation of their historical homeland in the true and wide sense of the word. In this sense, the letters and reports of the Armenian and Russian political figures presented in the publication contain important information, inform new details of already well-known historiographical facts.

**Key words:** Matenadaran, Lazarevs' archive, documents, Russian-Persian war, Eastern Armenia, Russian politics, letters, reports.